

Դեպի երազանքի մոլորակը

Երանի նրանց,
ովքեր կհասնեն իրենց
երազանքի մոլորակին:

2045 թվական, Կանադերալ հրվանդան, կեսգիշեր: Մեր առջև կանգնած էր «Արեոն» հրթիռը՝ կատարելագործված «Սթարշիփ»-ը: Հրթիռի փայլուն մետաղական պատյանը պսպղում էր լուսարձակների լույսի ներքո: Ես ու Ավետը փոքրինչ հուզված էինք ու անհանգիստ: 24 ժամ անց, նստած հենց այդ հրթիռում, մեկնարկելու էինք և ուղևորվելու դեպի Մարս: Մեծ պատասխանատվություն էինք զգում. առաջին երկու հայերը պետք է մասնակցեին մարսյան միջազգային առաքելությանը. հասնեին Մարս, ոտք դնեին կարմիր մոլորակի վրա, և կատարեին այնտեղ հայ մասնագետների կողմից մշակված և առաջադրված գիտափորձերն ու հետազոտությունները:

Ես ու Ավետը ծանոթացել էինք վաղուց՝ «ԱՅԱՍ» տիեզերագիտական ակումբում, որը ընկեր Գրիգորյանն էր հիմնել և տարիներ շարունակ վարել: Հենց այդտեղ արթնացավ տիեզերքի հանդեպ մեր սերը: Ակումբը կրթեց և համախմբեց տիեզերագնացությամբ հետաքրքրվող խանդավառ պատանիներին:

Տարիների ուսումնառությունը, աշխատանքը ավիատիեզերական ընկերություններում և ինտենսիվ մարզումները մեզ հասցրին այս օրվան: Մեր առաքելությունը պարզ էր՝ թռչել Մարս, որն արդեն երրորդ օդաչուավոր թռիչքն էր դեպի կարմիր մոլորակ, իջնել արդեն ստեղծված հենակայանի մոտ և աշխատել այնտեղ մի քանի ամիս՝ հետազոտություններ կատարելու և, ամենակարևորը, խորհրդային տարիներին և



2020-ականներին հայ երիտասարդների կողմից մշակված սարքերը փորձարկելու համար:

«Արեոն»-ը ժամանակակից ինժեներական հրաշք էր՝ նախատեսված միջմոլորակային թռիչքի ընթացքում երկար ապրելու ու աշխատելու համար: Դրանով էինք հասնելու Մարս, իջնելու մոլորակի վրա ու ետ վերադառնալու:


– Հը, Սուրեն, պատրա՞ստ ես, – հրթիռ բարձրանալիս հարցրեց Ավետը լուրջ հայացքով, չնայած՝ նրա աչքերում հուզմունք կար:

– Իհա՛րկե, – պատասխանեցի ես՝ սեղմելով նրա ուսը:

Մեկնարկը հուզիչ էր: Երբ «Արեոն»-ը երկինք բարձրացավ, ես շատ խառը զգացումներ ապրեցի՝ պատասխանատվություն, տագնապ, հուզմունք և ոգևորություն՝ և այդ ամենը ահագնացող հոնդյունի ու վիբրացիաների ներքո: Մենք մեզ հետ Մարս էինք տանում հայկական նորարարական մտքի լավագույն պտուղները: Մեզ ընդգրկել էին անձնակազմում հենց այդ պատճառով, ինձ՝ որպես ռադիոհաճախային տեխնոլոգիաների մասնագետ, իսկ Ավետին՝ որպես մեխանիկական ինժեներ:

Ճամփորդության ընթացքում բնականաբար անսպասելի դժվարություններ եղան: Տիեզերքում նույնիսկ ամենալավ մշակված և փորձարկված տեխնիկան կարող է տհաճ անակնկալներ մատուցել: Ես ու Ավետը աչքի ընկանք մեր հմտություններով և շատ արագ, հնարամիտ լուծումներով վաստակեցինք անձնակազմի հարգանքն ու վստահությունը. դարձանք հեղինակավոր «հարց լուծողներ»:

Օրերը վերածվում էին շաբաթների ու չէինք համբերում, թե երբ ենք տեղ հասնելու: Լավ է, որ շատ անելիքներ ունեինք. գիտափորձեր էինք անում, հետևում համակարգերին, մարզվում, և, իհարկե, նայելով «Արեոն»-ի լուսանցույցներից, վայելում տիեզերական հորիզոնները: Դա մի այլ աշխարհ էր՝ թե-



կուզ մահացու չպաշտպանված մարդու համար, բայց և չնաշխարհիկ աշխարհ, որից դժվար էր աչքերը կտրել: Իսկ քնից առաջ՝ ազատ ժամերին, Ավետի հետ ընկնում էինք հիշողությունների գիրկը:

– Հիշում ես ԱՅԱՍ-ի ժամանակները, – մի օր հարցրեց Ավետը: Ես ժպտացի՝ մտածելով այն մասին, թե որքան երիտասարդ էինք և ինչեր էինք երագում:

– Հենց այդ ժամանակները մեզ այստեղ բերեցին:


– Կախարդական էր, – համաձայնեց Ավետը. – առանց այդ ամենի կարող է մեր կյանքը բոլորովին այլ կերպ դասավորվել՝ շատ ավելի անհետաքրքիր:

– Ընկեր Գրիգորյանը մեզ միշտ խրախուսում էր դուրս գալ դասագրքերի շրջանակներից, մտածել ազատ՝ առանց կարծրատիպերի, – ասացի ես:

– Նրա ոգեշնչումը Տիեզերքով վարակիչ էր: Նա մեզ սովորեցրեց մասշտաբային մտածել ու նորովի նայել իրերին, – ասաց Ավետը, – մեզ տրված ստեղծագործական ազատությունը մեզ մեծ առավելություն տվեց»:

Մեր զրույցները մեզ հաճախ էին ետ բերում ԱՅԱՍ՝ հիշեցնելով, թե այդտեղից սկսած որքան ճանապարհ ենք անցել: Ակումբի կարգախոսը՝ «երբեք մի գերագնահատիր այն, ինչի արդեն հասել ես, բայց և երբեք մի թերագնահատիր այն, ինչի դեռ կարող ես հասնել», լիովին արդարացրեց իրեն. մի կողմից թույլ չտվեց, որ մեծամտանանք, մյուս կողմից էլ մեծ հավատ ներշնչեց մեր ուժերի հանդեպ:

Մարս թռչելու ճանապարհին մենք հաճախ էինք աստղային երկնքում հայացքով փնտրում ու գտնում մեր երագանքի մոլորակը: Վերջապես նկատեցինք, որ անգեն աչքով արդեն տեսնում ենք նրա սկավառակը և անգամ բևեռագդակները: Հավատս չէր գալիս, որ շուտով ոտքերով կանգնելու ենք այդ մոլորակի վրա: Հետո օրեցօր այն մեծացավ մեր աչքին մինչև վրա հասավ մարսաշուրջ ուղեծիր մտնելու պահը:



Մարսը մեծ էր ու փառահեղ: Անձնակազմի անդամները գրավեցին իրենց տեղերը, և տրվեց արգելակային իմպուլսը. «Արեոն»-ը մտավ հաշվարկային ուղեծիր: Մի քանի պտույտ, նախապատրաստություններ, և հաջորդ արգելակումով սկսվեց վայրէջքը: Այ դա իսկական կյանքի ու մահու կռիվ էր՝ հրեղեն ներխուժում մթնոլորտ, նավի ճկումներ, վիբրացիաներ... Թվում էր, թե ուր որ է նավը հողս կցնդի և մեր կտորտանքները ցաքուցրիվ կլինեն Մարսի մակերևույթին: Սակայն, ինչպես որ սպասվում էր, հաղթեց գիտությունը. անհողողող «Արեոն»-ը, ասես հանդիսավոր կերպով իր մեղմիչ հենարաններով հանդարտ նստեց գետնին՝ Արմաշ հենակայանին շատ մոտ:



Հենակայանի անվան ծագումն ինքնին հետաքրքիր պատմություն է: Տարիներ առաջ հայտարարվել էր անվանակոչման մրցույթ: Հայկական տիեզերական ֆորումն առաջարկել էր այդ անունը, որովհետև 2023-ին Ավստրիական տիեզերական ֆորումի հետ համագործակցելով իրականացրել էր մարսյան անալոգային առաքելություն Հայաստանի Արարատի մարզի Արմաշ գյուղի մոտ, որի անունով էլ կոչվել էր անալոգային աստղագնացների համար կառուցված կայանը: Եվ հենց դա ընտրվեց որպես լավագույն առաջարկ:

Անձնակազմի անդամներն անհամբեր սպասում էին Մարսի հետ հանդիպմանը: Վերջապես եկավ այն պահը, երբ պետք էր դուրս գալ «Արեոն»-ից ու տեղափոխվել Արմաշ: Ես ու Ավետը առաջին հինգ հոգու մեջ էինք: Մենք հերթով Արմիեթչ դոնանցքով մտանք հերմետիկ օդաչուավոր ծավալով մարսագնացը՝ «Հեբմոբ»-ը: Արմիեթչը հերմետիկ փակելուց հետո «Հեբմոբ»-ը հրթիռի ներքնից իջեցվեց գետնին: Այն շարժվեց դեպի Արմաշ և շուտով Արմիեթչով կցվեց բնակելի մոդուլին: Մենք ներս մտանք, իսկ «Հեբմոբ»-ն անջատվեց ու գնաց խումբ առ խումբ մյուսներին բերելու: Մեր գիտարշավային սկաֆանդերն էլ Արմիեթչով կցված էին «Հեբմոբ»-երին և Արմաշի բնա-





կելի մոդուլին՝ դրսի կողմից: Դա թույլ էր տալիս օդաչուավոր ծավալի ներսից բացել Արմ-հեթչի դռնակը, հետո դրա բացվածքի մեջ բացել դրսից կպած սկաֆանդրի ետևի դռնակը, մտնել սկաֆանդր, փակել ետևից դռնակները, անցկացնել նրանց միջև մնացած օդի ու փոշու մանրէազերծում, հետո սկաֆանդրով անջատվել օդաչուավոր ծավալից ու արդեն ազատ քայլել Մարսի մակերևույթով: Վերադարձը օդաչուավոր ծավալ արվում էր գործողությունների հակառակ հերթականությամբ: Արդյունքում, սկաֆանդրերը միշտ մնում էին դրսում, իսկ աստղագնացները ելումուտ էին անում օդաչուավոր ծավալները՝ առանց իրենց հետ ներս բերելու մարսյան փոշի ու հնարավոր միկրոօրգանիզմներ կամ ներսից դուրս տանելու երկրային միկրոօրգանիզմներ:

Ես ու Ավետը առանձնահատուկ հպարտությամբ էինք նայում այդ հնարամիտ լուծմանը, որովհետև դա հայկական լուծում էր: Այն ծնվել էր դեռ 1992 թ. ԱՅԱՍ ակումբում, երբ Գրիգորյանը աշակերտների առջև դեպի Մարս առաջին օդաչուավոր թռիչքի հայեցակարգն ու տեխնիկական լուծումները մշակելու խնդիր էր դրել:

Արմաշում մեզ ոգևորված դիմավորեց այնտեղ արդեն կես տարի ապրող անձնակազմը: Ի դեպ՝ Արմաշի բնակելի մոդուլը կառուցված էր հենց Ավետի նախագծով՝ բնական խառնարանի մեջ փչված թաղանթ, որի ճկուն տանիքը միկրոասուպային պաշտպանության համար վրայից փոված հողի բարակ շերտով հանդերձ պահվում էր ներսի մթնոլորտային ճնշումով: Նման լուծումը բավական հեշտացրել էր մոդուլի ստեղծումը: Ես կատակով այդպիսի մոդուլին անվանում էի «Ավետարան»:


Առաջին օրն անցավ հանգիստ. տեղավորվեցինք մեր մենախցերում, դասավորեցինք բերած բեռներն ու սարքավորումը և լարված վայրէջքային փուլից հետո վերջապես քնեցինք:

Արշալույսը Մարսի վրա երկնքի գույների անսովոր խաղով պարզապես չքնաղ էր: Ես ու Ավետը պետք է մակերևույթին տեղադրեինք ընդերքը խորագննող ռա-



դարային անտենաների նոր համակարգ, որը տարիներ առաջ ես էի առաջադրել իմ հոդվածներից մեկում և դրա հայկական ծագումը նշելու համար անվանել էի «Ռադար»:

Նպատակն այն էր, որ ռադարն արձակի երկար ռադիոալիքներ, ստանա դրանց արձագանքները ստորգետնյա բնական սառույցի զանգվածներից, և արդյունքների մշակումով ստացվի դրանց տեղաբաշխման եռաչափ պատկերը: Դրա համար մենք պետք է հնարավորինս հարթ տեղանքում մեխեինք հողին ցցեր՝ որոշակի դասավորվածությամբ 30մ×30մ չափերով քառակուսի դաշտում և կապեինք դրանք իրար տարբեր երկարության մետաղալարերով: Այդ հատուկ կառուցվածքը թույլ էր տալու նրբորեն ուղղորդել ճառագայթվող ալիքը ներքև՝ տարբեր ուղղություններով, և այդպես, փոփոխելով նաև ալիքի հաճախությունն ու տեսածրելով ընդերքը տարբեր խորությունների վրա, ստանալ ստորգետնյա սառույցների և հեղուկ ջրի եռաչափ բաշխումը: Այս տեխնոլոգիան արդեն բարեհաջող փորձարկվել էր Երկրի ու Լուսնի վրա: Իսկ ինձ ու Ավետին վստահվեց առաջին անգամ տեղակայել ու փորձակել դա Մարսի վրա: Այդպես էինք մենք պատրաստվում մարսյան առաքելությունների համար տեղում ջրի պաշարներ գտնել:



Եկավ ելքի պահը: Մենք Արմիեթչերով մտանք մեր սկաֆանդրերը և մանրեագերծումից հետո պոկվեցինք բնակելի մոդուլից: Թվում էր, թե անմիջապես կուղղվենք դեպի «Արեոն»-ը՝ համակարգի մասերը վերցնելու, բայց Մարսը... Երբ առաջին անգամ ոտք ես դնում օտար մոլորակի վրա, մի պահ անշարժանում ես ու զմայլվում շրջապատի աներկրային գեղեցկությամբ: Շուրջը վառ ժանգագույն անապատ էր, երկինքը՝ դեղնաշագանակագույն, անհամար մեծ ու փոքր քարեր ու քամով ալիքաձև հարդարված ժանգափոշի ու ավազ, մանր ու միջին խառնարաններ, բլրակներ, երբեմնի ջրային հոսքերից ու երոզիայից միլիոնավոր տարիների ընթացքում գոյացած և մերկացած նստվածքային ապարների ու թերթաքարերի բազում շերտեր:





Հենակայանի մոտ, մի փոքր բլրակի վրա տեսանք քամու տուրբին՝ դրանից սնուցվող և ինքնավար գործող օդերևութաբանական կայանքի հետ միասին: Քամին թեթև էր, բայց տուրբինը լավ էլ պտտվում էր: Ես ու Ավետը իրար նայեցինք ու ժպտացինք. մենք ինքներս էինք դպրոցական տարիքում տեսել այդ նորարարական արդյունավետ տուրբինը, որը մշակվել և ստեղծվել էր 2024 թ. «Բազումք» տիեզերական հետազոտությունների լաբորատորիայում: Այն ժամանակ դա փորձարկվեց ոչ միայն Բազումքի բակում, այլև Արմաշ կայանում:



Առաջին ելքը անցավ հաջող, ինչպես և մյուսները: Մենք տեղադրեցինք «Ռադարմ»-ը, տեսաձրեցինք Արմաշի շրջակայքի ընդերքն ու պարզեցինք ջրի ստորգետնյա պաշարների ծավալը: Հաստատվեց, որ Արմաշի տակ մակերևույթին բավական մոտ սառցաշերտ կա:



«Ռադարմ»-ի աշխատանքից գոհ էի, բոլորը շնորհավորում էին: Երեկոյան Ավետի հետ վերլուծեցինք գիտափորձի կատարումը: Բնականաբար հիշեցինք իմ այցելությունները Բազումք, երբ դեռ դպրոցական էի: Հենց այնտեղ էս առաջին անգամ սկսեցի զբաղվել արբանյակային կապով: Ավետին պատմեցի, թե ինչպես էի աշխատում անտենայի վրա՝ առաջին հայրենական արբանյակից՝ «Հայասաթ-1»-ից ազդանշաններ որսալու համար: Դա հեշտ չէր, բայց, ի վերջո, երբ հերթական անգամ Հայասաթի անցումից առաջ դուրս էի եկել Բազումքի բակ, միացրել էի իմ անտենան համակարգչիս և ամեն ինչ արդեն ճիշտ կարգաբերել, վրա հասավ ամենաանակնկալ ու հուզիչ պահը. իմ համակարգչից հանկարծ լսվեց Հայասաթից հեռարձակվող կոմիտասյան «Կաքավիկ»-ը: Ավետը՝ տպավորված իմ պատմությունից ասաց.

– Պարզ է, թե ինչու է դա քո համար այդքան հիշարժան:



– Իսկապես, - համաձայնեցի ես. – այս փորձառությունն ինձ տվեց համարձակորեն խնդիրներ դնելու և լուծելու ունակություն, որը, ինչպես տեսնում ես, Մարսի վրա շատ է պետք գալիս:

Վերջին, ամենաբարդ գիտափորձը սառցաշերտի հորատումն էր հրթիռի միջոցով, և դրա ակունքներում նորից ԱՅԱՍ-ն էր: 1988-ին ԽՍՀՄ համամիութենական «Տիեզերք» մրցույթին ԱՅԱՍ-ի սան Հայկ Սարգսյանը ներկայացրեց «Անի» տիեզերական սարքը՝ նախատեսված ինքնավար կերպով Լուսին թռչելու, վայրէջք կատարելու, հորատող հրթիռով հորատանցք փորելու, դրա տարբեր խորություններից բնահողի նմուշներ վերցնելու և Երկիր հասցնելու համար: Խմբակի անդամները ոչ միայն մշակել էին սարքի ողջ կառուցվածքն ու աշխատանքը, այլև հաշվարկներով հիմնավորել դրա իրատեսական լինելը նույնիսկ այն ժամանակվա տիեզերական միջոցներով: Հիմա դա պետք է արվեր Արմաշի տակ գտնված սառցային սալի վրա: Արտաքինից այն ծածկված էր մարսահողով, բայց ոչ մեծ խորությունից սկսած արդեն հիմնականում սառույց էր: Քանի որ սարքը բերվել էր «Արեոն»-ով և պիտի սպասարկվեր մեր կողմից, ապա չունեի ո՛չ վայրէջքային, ո՛չ էլ թռիչքային աստիճան, բայց հորատող մասով բավական նման էր «Անի»-ին: Դրա մշակմանը մասնակցել էին նաև հայ կոնստրուկտորներ, ինչի մասին արդեն իսկ հուշում էր սարքի անունը՝ «Հրահորատ» (“Hrahorat”):



Այդ օրը ես կհիշեմ իմ ողջ կյանքում: Ես ու Ավետը գիտարշավային ինժեներներ Մայքլ Դուլիթլի և Սթիվ Հոփքինսի հետ միասին «Հեբմոբ»-ով գնացինք «Աերոն»-ի մոտ, բեռնեցինք «Հրահորատ»-ը, տեղափոխեցինք այն իր տեղակայման վայրը և տեղադրեցինք մեկնարկի տեղում: Բոլոր ստուգումներից հետո սարքը պատրաստ էր իր պատմական առաքելությանը՝ առաջին անգամ կատարել Մարսի սառցաշերտի խորքային հորատում մինչև 50-60 մ խորություն: Պետք է տեսնեինք, թե ինչպես կաշխատի հիթիռահորատման տեխնոլոգիան մարսյան սառցաշերտի մեջ խորանալու համար: Սարքն աշխատելու էր ջրածնով և թթվածնով, որպեսզի այրման արգասիքը լինի ջուր և միայն այդ մասով աղավաղվի հորատանցքից արտանետվող նյութի քիմիական բաղադրությունը:



Մենք հեռացանք ապահով հեռավորության վրա, և տրվեց մեկնարկը: Դա արվեց երեկոյան, որպեսզի հորատանցքի պատերը հորատումից հետո արագ սառչեն ու փլուզումներ չլինեն: Ուղղորդող խողովակում կանգնած հրթիռի տակից դուրս հորդաց կրակը: Ասես մի լապտեր վառվեց ուղղված դեպի մարսյան երկինք: Հրթիռն իր ծանրության տակ սկսեց ինջնել հողի մեջ, իսկ արտանետվող փոշու շնորհիվ լույսի փունջն էապես պայծառացավ մթնշաղի ֆոնին: Ուղղորդողի ելքին կցված տվիչները հաղորդում էին տվյալներ արտանետվող գազերի քիմիական բաղադրության մասին:

Քիչ անց լույսը սպիտակեց ու թուլացավ: Պարզ էր, որ սարքը ներխուժել է սառույցի շերտը և արտանետվող ջրի գոլորշիները սառչելով դառնում էին լույսը ցրող սառույցի բյուրեղիկներ: Ֆանտաստիկ տեսարան էր. շատրվանի պես վեր ձգված փոշու ամպի տակից սկսեցին թափվել ձյան փաթիլներ:

Շուտով այդ ամենը ցրվեց երկնքում՝ հուշելով, որ վառելիքը սպառվել է, և «Հրահորատ»-ը կանգնել է: Նմուշառող սարքն ինքնավար կերպով մտավ ուղղորդողի մեջ և ճուպանով իջավ հորատանցք: Կես ժամ անց տարբեր խորություններից վերցված նմուշներով այն ետ բարձրացավ: Մենք դրանք բերեցինք և դրսի կողմից տեղադրեցինք բնակելի մոդուլի լաբորատոր խցիկում, որպեսզի հետո ներսից խցիկին հերմետիկ կցված ձեռնոցներով կատարեինք անհրաժեշտ քիմիական վերլուծությունները:

Վերջապես մտանք բնակելի մոդուլ: Ներսում մեզ դիմավորեցին ծափողջուններով ու գրկախառնումներով: Իսկ ես ու Ավետը մտքում ցնծում էինք. ամեն ինչ ավելի հաջող անցավ, քան սպասում էինք, գիտեինք, որ մեզ լրիվ արդարացրեցինք և որ վաղը Երկրի վրա հաջողության մասին լուրը տարածվելու է ամենուր, հատկապես Հայաստանում: Բոլորն անհամբեր սպասում էին, որ պատմենք ելքի մանրամասները, բայց մենք ահավոր հոգնած էինք: Շտապ ցնցուղ ընդունեցինք ու պառկեցինք քնելու:

Թվում էր, թե բուռն օրից հետո ուղեղս չի անջատվի ու չեմ կարողանա քնել: Սակայն գիտափորձի հաջող ավարտի գիտակցումն էլ կտրուկ զցեց ողջ լարվածությունը, և աչքերս սկսեցին փակվել: Զգում էի, որ ուր որ է կննջեմ, բայց հանկարծ մի աղմուկ լսեցի,



ասես ինչ-որ մեկը բացեց ու փակեց իմ մենախցիկի դուռը: Նայեցի շուրջս, տեսնեմ «Քվանտ» վարժարանում եմ՝ ԱՅԱՍ-ի պարապմունքների լսարանում, որի դռան մոտ ինչ-որ իրարանցում է: Իսկ մյուս կողմում՝ գրատախտակի մոտ, Գրիգորյանն է խմբակի սաների առջև 9-րդ դասարանցի Ավետի հետ քննարկում նրա մտահղացումը Մարսի խառնարանում բնակելի մոդուլ ստեղծելու մասին: Ոնց որ անցյալ տեղափոխված լինեի. չէի հասկանում, թե ինչ է կատարվում:



Եվ երբ Գրիգորյանը հայտարարեց պարապմունքի ավարտն ու ժպտալով նայեց իմ կողմը, սթափվեցի ու հասկացա, որ իմ ողջ վերապրածը՝ թռիչքը դեպի Մարս, վայրէջքը, գիտափորձերը, այդ ամենը երազ էր: Հիշեցի, որ եկել էի Քվանտ իմ խմբին հաջորդած խմբի պարապմունքին ու, թերևս, սուզվելով ապագայի մասին բաղձալի երազների մեջ, նիհեի էի: Շատ ափսոսացի, որ երազ էր, ու դեռ ամեն ինչ առջևում է, բայց միևնույնն է ուրախ էի, որ այնտեղ եմ՝ իմ սիրած միջավայրում... կարոտել էի ԱՅԱՍ-ը: